ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«14» փետրվարի 2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմեն Ավետիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 13-րդ օրվա (12.02.2024թ.)՝ ժամը 10:00-ն,
- հայտը բացվել է էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 13.02.2024թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները՝

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Բենզին, ռեգուլյար	15 190 600
2	Բենզին, պրեմիում	12 998 400

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Էրեբունի 12/4

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/02» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	20329583.34	20%	24395500	20329583.34	20%	24395500.00	Մերժված
2	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	17602000	20%	21122400	17602000	20%	21122400.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 13.02.2024թ.՝ ժամը 10:30-ին:

7. Տվյալներ՝ ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան